



ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

11 հունվարի 2024 թվականի թիվ 1-Ա
ք. Երևան

ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ԹԻՎ 60-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ մասի, 43-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով «ՍՓՐԻՆԳ ԹԵՔՆՈԼՈԳԻՍ» ՍՊ ընկերության՝ անվան փոփոխության մասին դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 6-ի «ԻՐԻԴԱ ԳԼՈՐԱԼ» ՍՊ ընկերության հեղինակազորման մասին» թիվ 60-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ «ԻՐԻԴԱ ԳԼՈՐԱԼ» անվանումը փոխարինել «ՍՓՐԻՆԳ ԹԵՔՆՈԼՈԳԻՍ» անվամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՍՓՐԻՆԳ ԹԵՔՆՈԼՈԳԻՍ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈՒԲՅԱՆ

2024թ. հունվարի 11
ք. Երևան